ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ. ՄԱՐՏԻ 6-ԻՆ ԵՎ 7-ԻՆ

05.03.2024 15:36

Հարգելի՛ գործընկերներ,

Ձևավորելով ավանդույթ՝ Կանանց միջազգային օրվան ընդառաջ ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է հանրապետության ամբողջ տարածքում կանանց իրավունքներին նվիրված միջոցառում իրականացնելու մասին:

Միջոցառման շրջանակներում 2024թ. մարտի 6-ին և 7-ին փաստաբանական գրասենյակները, փաստաբանները և Փաստաբանական ակադեմիայի ունկնդիրներն անվճար իրավաբանական խորհրդատվություն կտրամադրեն կանանց:

Նախաձեռնության գլխավոր նպատակն է խթանել կանանց իրավունքների պաշտպանությունը Հայաստանում, ինչպես նաև բարձրացնել հանրային իրավագիտակցությունը և փաստաբանին դիմելու իրավական մշակույթը:

Անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվելու է ինչպես ՀՀ փաստաբանների պալատի Երևան քաղաքում տեղակայված վարչական շենքում, այնպես էլ փաստաբանական գրասենյակներում՝ Երևանում և բոլոր մարզերում:

Անհրաժեշտության դեպքում քաղաքացիները կարող են զանգահարել 010 600 701 (ներքինը՝ 111) հեռախոսահամարին:

Կից ներկայացնում ենք «Անվճար իրավաբանական խորհրդատվություն կանանց» ծրագրին միացած փաստաբանների և փաստաբանական գրասենյակների տվյալները

↓

ԲԵՌՆԵԼ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՑԱԾ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԲԵՌՆԵԼ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՑԱԾ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })